ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ԱՄ-2018/111, 19.12.2018թ.

Բողոք ներկայացնող անձ՝ «ԷԴՀՈՎԱ» ՍՊԸ

Պատվիրատու՝ «ՀՀ Արարատի մարզի Մասիս քաղաքի Մ. Մաշտոցի անվան № 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝ «ԱՀԴ-ԳՀԱՊՁԲ-19/2-80» ծածկագրով գնանշման հարցում, սննդամթերքի ձեռքբերում:

Բողոքի պահանջը՝

1. Պարտավորեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 17.12.2018թ. ժամը 10:00-ի տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 3.4 կետով Ընկերության հայտը մերժելու մասին կայացրած որոշումը:
2. Պարտավորեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 17.12.2018թ. ժամը 10:00-ի տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 3.4 կետով Ընթացակարգի 15-րդ չափաբաժինը չկայացած հայտարարելու որոշումը:
3. Պարտավորեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում Ընկերության հայտը բավարար գնահատելու մասին:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Մ. ԱՆԱՆՅԱՆ, ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Տ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Տեղեկացնում ենք, որ բողոքի քննության նպատակով հրավիրվող նիստերին առցանց կարող եք հետևել https://www.e-gov.am/gnumner/ հղումով կայք-էջում:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝
50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Սույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,

51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման՝ ուժի մեջ մտնելու օրը ներառյալ:

<<ԷԴՀՈՎԱ>>

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

19.12.2018թ

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին

Բողոք բերող՝ <<ԷԴՀՈՎԱ>> ՍՊԸ
հասցե՝ Արարատի մարզ, ք. Մասիս, 4-րդ փողոց 36տ
հեռ՝ 093099992, 077770713
էլ. փոստ՝ vahe-antonyan@inbox.ru

Պատվիրատու՝ <<ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ
ՔԱՂԱՔԻ Մ. ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ
ՆՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ
հասցե՝ ՀՀ, ք. Մասիս, Երևանյան խճուղի 58

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
<<ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ
ՔԱՂԱՔԻ Մ. ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ
ՆՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ-ի կարիքների համար
սննդամթերքի ձեռքբերման նպատակով
կազմակերպված ԱՀԴ-ԳՀԱՊՁԲ-19/2-80
ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ

Բողոք

Գործի հակիրճ նկարագրությունը և փաստերը.

<<ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԻ Մ. ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՆՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ-ի կարիքների համար կազմակերպվել է ԱՀԴ-ԳՀԱՊՁԲ-19/2-80 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ)

Ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկա է հանդիսանում սննդամթերքը:

Ի թիվս այլ ընկերությունների Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացվել նաև <<ԷԴՀՈՎԱ>> ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) կողմից:

Ընթացակարգը գնահատող հանձնաժողովի 10.12.2018թ ժամը 13:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացվել է որոշում Ընկերությանը 15-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչելու վերաբերյալ, այնուհետ հարցում է կատարվել ՀՀ ԿԱ ՊԵԿ՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից ներկայացված եզրակացության համաձայն Ընկերությունը ունեցել է 134000 ՀՀ դրամի չափով պարտավորություն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.12.2018թ ժամը 10:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 3.4 կետով արձանագրվել է, որ <<ԷԴՀՈՎԱ>> ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահանվող

Մ1645-18

«19» 12 2018թ

եկամուտների գծով ունեցել է Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ և կայացվել է որոշում Ընկերության հայտը մերժելու վերաբերյալ:

<u>Բողոքի իրավական հիմքերը և հիմնավորումը</u>

Ընկերության հայտը մերժվել է ԱՀԴ-ԳՀԱՊՁԲ-19/2-80 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ ունենալու հիմնավորմամբ:

Ընկերության կողմից ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել, որ այդ պարտավորությունները վերաբերում են <<ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին>> ՀՀ օրենքի համաձայն վճարման ենթակա դրոշմանիշային վճարներին, որոնց մասին Ընկերությունը հարկային մարմի կողմից որևէ իրազեկում չի ստացել և այդ տեղեկությունը կարող էր ձեռք բերել միայն Ընկերության հարկ վճարողի անձնական հաշվի քարտի քաղվածքի տվյալներում առկա տեղեկատվությունից:

Ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել նաև, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2017թ հուլիսի 19-ի թիվ 228-Ն հրամանի համաձայն սահմանված վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ տրվող տեղեկանքի ձևում <<ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին>> ՀՀ օրենքի համաձայն վճարման ենթակա դրոշմանիշային վճարը որպես հարկային մարմի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն, նախատեսված չէ:

Ընկերությունը գտնում է, որ պետք է վերականգնվի նրա հետագա մասնակցությունը գնման գործընթացին, քանի որ դրա դադարեցումը պայմանավորված է եղել հարկային մարմի կողմից իրազեկված չլինելու հանգամանքով:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձից

Խնդրում եմ՝

1. Պարտավորեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 17.12.2018թ ժամը 10:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 3.4-ին կետով Ընկերության հայտը մերժելու մասին կայացրած որոշումը:
2. Պարտավորեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 17.12.2018թ ժամը 10:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 3.4-ին կետով Ընթացակարգի 15-րդ չափաբաժինը չկայացած դատարարելու որոշումը:
3. Պարտավորեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում Ընկերության հայտը բավարար գնահատելու մասին:

Առդիր 22 թերթ

Տնօրեն Գ. Անտոնյան